ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

31 հոկտեմբերի 2012 թվական

ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8/2

ժամը 12.00

Նիստը վարում է Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Հերթագրվել է Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության չորս անդամ՝ Պողոս Փլավչյանը, Գուրգեն Գասպարյանը, Ջիվան Պողոսյանը, և Արմեն Հակոբյանը:

Հարցի համար ձայնը տրվում է Պողոս Փլավչյանին:

Պողոս Փլավչյան

- Պարո՛ն քաղաքապետ, առաջին հարցը վերաբերում է Խանջյան-20 հասցեում տեղի ունեցած փլուզմանը, քանի որ և՛ լրագրողներին, և՛ քաղաքացիներին հետաքրքրում է այդ հարցը:

Խնդրում եմ ներկայացնել, թե ի՞նչ է տեղի ունեցել նշված հասցեում և ո՞րն է մեր պատասխանատվությունը:

Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

- Խանջյան-20 հասցեում տեղի ունեցած փլուզումը քննարկման առարկա է դարձել և՛ մամուլում, և՛ քաղաքացիների մոտ: Նշված հասցեում փլուզվել է ոչ թե շենքը, այլ որոշ շինարարական կաղապարներ:

Աշխատանքները նշված հասցեում միջադեպի օրը կատարվել են անօրինական էր. Կազմակերպությունը, որը իրականացնում էր շինարարություն, շինթույլտվությունը տրվել էր դեռևս 2009 թվականին:

2011 թվականին շինթույլտվության ժամկետն ավարտվել էր և կազմակերպությունը դիմել էր շինթույլտվության ժամկետը երկարաձգելու համար, որից հետո շինարարական աշխատանքները վերսկսվել էին:

2012 թվականին նոր շինթույլտվության ժամկետը ևս ավարտվել էր, որի վերաբերյալ կա Երևանի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության համապատասխան ծառայությունների արձանագրությունը, համաձայն որի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները Խանջյան-20 հասցեում շինարարական աշխատանքները դադարեցրել են և սահմանել հսկողություն:

Այդ օրը, երբ տեղի է ունեցել փլուզումը, փաստորեն, նշված հասցեում իրականացվել են անօրինական շինարարական աշխատանքներ:

Ներկայումս տվյալ հասցեում աշխատում են փորձագետներ և նրանց ուսումնասիրությունների ավարտից հետո կներկայացվի եզրակացություն, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության մասնագետները կձեռնարկեն համապատասխան միջոցներ:

Հետագայում Խանջյան-20 հասցեում շինարարական աշխատանքները վերսկսվելու հետ կապված, տեղեկացնեմ, որ եթե կազմակերպությունը դիմի Երևանի քաղաքապետարան՝ շինթույլտվության ժամկետը երկարաձգելու համար, ապա քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանման

մասնագետների և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի կողմից նշված հասցեում կկատարվեն ուսումնասիրություններ, կիրականացվի նախագծի փոփոխություն և հնարավորության դեպքում նշված հասցեում կվերսկսվեն շինարարական աշխատանքները: Եթե Երևանի քաղաքապետարանի կողմից նշված հասցեում շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն չտրվի, ապա կսահմանվի հսկողություն, որպեսզի շինարարական աշխատանքներ չիրականացվեն:

Փորձագետների կողմից վերջնական եզրակացության տրամադրումից հետո, կատարված անօրինականության համար օրենքով սահմանված կարգով կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

Խանջյան-20 հասցեում շինարարական թույլտվության ժամկետն ավարտվելուց հետո աշխատանքները շարունակելու համար կազմվել էր արձանագրություն և տվյալ կազմակերպությունը տուգանվել էր 2200000 դրամ, որը վճարվել էր հաջորդ օրը: Այսինքն՝ նշանակում է, որ այդ կազմակերպությունն ընդունել էր, որ իր կողմից կատարվել էր անօրինականություն և դրանից հետո այդ տարածքում դադարեցվել էին շինարարական աշխատանքները:

Պողոս Փլավչյան

– Շնորհակալություն պարո՛ն քաղաքապետ:

Իմ երկրորդ հարցը.

Հարցը վերաբերում է տրանսպորտի ոլորտին:

Մայրաքաղաքի փողոցներում տեղադրվող արագաչափերը և տեսախցիկները դրական երևույթ են, սակայն որոշ տարածքներում անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ՝ կապված գծանշումների նորացման, լուսացույցների սարքինության հետ:

Նշեմ մի քանի օրինակներ.

Դավթաշենի կամրջից դեպի Վ.Վաղարշյան-Ա.Խաչատրյան փողոցների խաչմերուկ ընկած հատվածի լայնությունը նախատեսված է երեք մեքենայի կայանման համար, սակայն նշված հատվածում գծանշման համաձայն կարելի է կանգնեցնել երկու մեքենա, նույն փողոցից դեպի Կոմիտասի պողոտայի խաչմերուկ ընկած հատվածում կատարված է երեք բաժանում: Երեկոյան ժամերին, երբ երթևեկությունը ծանրաբեռնված է լինում, վարորդները մեքենաները կայանում են երեք շարքով, հավանական է, որ այդ հատվածում տեղադրված տեսախցիկը ֆիքսի դա և քաղաքացիները տուգանվեն: Նշեմ, որ այդ հատվածում գծանշումները հին են և տեսախցիկներ տեղադրելուց հետո չեն նորացվել:

Նույն իրավիճակն է նաև Ն. Տիգրանյան-Կոմիտասի պողոտա խաչմերուկի հատվածում, որտեղ տեղադրված է լուսացույց և աջակողմյան շրջադարձը միշտ թույլատրվում է, իսկ հանդիպակաց լուսացույցի վրա չկա համապատասխան աջ սլաքը:

Պռոշյան փողոցի սկզբնամասում՝ Դ.Դեմիրճյան փողոցի խաչմերուկից ներքև, տեղադրված է արագաչափ, որի վերաբերյալ ցուցանակը տեղադրված է անհարմար և ոչ տեսանելի վայրում, ճիշտ կլինի արագաչափը տեղադրել 10-20 մետր ներքև, որպեսզի քաղաքացիների համար լինի տեսանելի:

Չնայած «Լուսանշան» ՊՈԱԿ-ը այլևս Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպություն չի, սակայն պետք է նշված հարցերը համաձայնեցնեն քաղաքապետարանի հետ, որպես այս հարցում լիազորություն ունեցող վերահսկող մարմին, և ապահովվեն անհրաժեշտ պայմաններ երթևեկության համար:

Տարոն Մարգարյան

– Պարո՛ն Փլավչյան, նշված թերությունները նկատվել են ոչ միայն Ձեր կողմից, այլև Երևան քաղաքի ավագանու մյուս անդամների և վարչական շրջանների ղեկավարների կողմից: Նշված հարցը պարբերաբար ներկայացվում է ճանապարհային ոստիկանությանը և որոշ տարածքներում այդ խնդիրներին տրվել են լուծումներ:

Մինչև 2009 թվականի մայիս ամիսը «Լուսանշան» ՊՈԱԿ-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպություն էր և նշված խնդիրներին տրվում էր ավելի հեշտ և օպերատիվ լուծում, հետագայում այդ կազմակերպությունը դարձավ ոստիկանության ենթակայության կազմակերպություն, որի հետևանքով առաջացան երկկողմ տարաձայնություններ:

Ինչ վերաբերում է լիազորություններ սահմանելուն, տեղեկացնեմ, որ այդ լիազորություններն ամբողջությամբ տրված են ոստիկանությանը և քաղաքապետարանը հանդես է գալիս որպես առաջարկող կողմ:

-Հանձնարարում եմ աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ Երևանի ավագանու անդամների, Երևանի վարչական շրջանների ղեկավարների և տրանսպորտի վարչության աշխատակիցների հետ համատեղ կատարել գույքագրում, նմանատիպ խնդիրները քննարկել ճանապարհային ոստիկանության հետ, իսկ այն տարածքների համար, որտեղ ճանապարհային ոստիկանության ուսումնասիրություններից հետո կարելի է կատարել համապատասխան փոփոխություններ, կազմել ժամանակացույց և վերացնել այդ թերությունները:

-Պարո՛ն Գևորգյան, այս հանձնարարականի կատարման նկատմամբ սահմանեք հսկողություն և նմանատիպ խնդիրներին տվեք լուծումներ: Նշեմ, որ ս.թ. հոկտեմբերի 29-ին Երևանի քաղաքապետարանում տեղի էր ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում հանձնարարական էր տրվել ճանապարհային ոստիկանությանը՝ մայրաքաղաքում վնասված և հին երթևեկության նշանները գույքագրել և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու դրանց փոխարինումը նորերով:

Պողոս Փլավչյան

– Պարո՛ն քաղաքապետ, առաջարկում եմ առաջնահերթությունը տալ այն տարածքներին, որտեղ տեղադրված են տեսախցիկներ, որպեսզի քաղաքացիները չտուգանվեն:

Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

– Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գուրգեն Գասպարյանին:

Խնդրեմ:

Գուրգեն Գասպարյան

– Ողջունում եմ ներկաներին:

Հարցն ուղղում եմ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին:

2011 թվականի մարտ ամսին Ադոնցի հ.28 շենքի բնակիչները դիմել են Երևանի քաղաքապետարան, նշված հասցեում գտնվող շենքի հարակից տարածքի ասֆալտապատման, խաղահրապարակի և այգու բարեկարգման, արտաքին լուսավորության, շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից բնակիչներին տրվել է դրական պատասխան, սակայն մինչ օրս նշված հասցեում աշխատանքներ չեն իրականացվել:

Խնդրում եմ պատասխանել, ե՞րբ կսկսվեն տվյալ հասցեում աշխատանքները:

Տարոն Մարգարյան

– Հանձնարարում եմ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին և Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին կատարել ուսումնասիրություններ, ճշտել թե աշխատակազմի ո՞ր ստորաբաժանման կողմից են կատարվել այդ թերացումները:

-Պարո՛ն Գասպարյան, խնդրում եմ Ձեզ մոտ առկա տեղեկատվությունը տրամադրել աշխատակազմի քարտուղարին՝ անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարելու համար:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Ջիվան Պողոսյանին:

Խնդրեմ:

Ջիվան Պողոսյան

– Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցն ուղղում եմ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դ. Օհանյանին.

- Ինչո՞վ է պայմանավորված Հաղթանակ թաղամասի բնակիչների բողոքն այն մասին, որ քաղաքացիներին տեղեկանքներ տրամադրելու համար պարտադրվում է կատարել գույքահարկի և հողի հարկի վճարումները: Արձանագրվել են դեպքեր, որ ծնողներին պարտադրել են կատարել նշված վճարումները և հետո տրամադրել տեղեկանքներ՝ մանկապարտեզներ ներկայացնելու համար:

Նշեմ, որ Հաղթանակ թաղամասում չկա համատիրություն, քանի որ թաղամասը համարվում է սեփական տների հատված, ինչպես նաև չկա լիազոր մարմին:

Տարոն Մարգարյան

– Պարո՛ն Պողոսյան, տեղեկացնեմ, որ տեղեկանքներ տրամադրելու համար քաղաքացիներին հիմնականում չի պարտադրվում կատարել գույքահարկի, հողի հարկի կամ այլ տեսակի վճարումներ, բայց շատ ցանկալի է կատարել այդ վճարումները:

Երևան քաղաքի ավագանու համաձայնությամբ մայրաքաղաքում երեխաները մանկապարտեզներ հաճախում են անվճար և ցանկալի է, որ Երևանի բնակիչը Երևան համայնքի նկատմամբ իր պարտավորությունները կատարի և հետո օգտվի այդ ծառայություններից:

Մենք օգնում ենք, որպեսզի երեխաներն անվճար հաճախեն մանկապարտեզներ, սակայն ծնողները չեն ցանկանում Երևան քաղաքի նկատմամբ իրենց պարտավորություններն իրականացնել, դրա համար քաղաքապետարանի աշխատակազմը և Երևան քաղաքի ավագանու անդամները պետք է կոչ անեն քաղաքացիներին՝ պատշաճ կերպով իրականացնելու իրենց պարտավորությունները Երևան համայնքի նկատմամբ:

Երևանի քաղաքապետը և Երևան քաղաքի ավագանին հնարավորություն են տվել մոտ 30000 երեխայի անվճար հաճախել մանկապարտեզ, ուստի պետք է Երևան քաղաքի բնակիչները ևս իրենց պարտավորություններն իրականացնեն Երևան քաղաքի նկատմամբ: Եթե այդ գումարները չհավաքագրվեն, ապա հնարավոր չի լինի ապահովել երեխաների անվճար հաճախումը մանկապարտեզներ, կամ իրականացնել նմանատիպ այլ ծրագրեր:

Ինչ վերաբերում է համատիրությունների խնդրին, նշեմ, որ խնդիրն առկա է մայրաքաղաքի բոլոր սեփական հատվածներում, քանի որ այստեղ կա օրենսդրական բացթողում:

Նախկինում կար «տնատիրության նախագահ», որն իրականացնում էր այդ աշխատանքները և իր կողմից մատուցած ծառայությունների դիմաց ստանում էր աշխատավարձ:

Ներկայումս այս խնդիրը քննարկվում է աշխատակազմի իրավաբանական վարչությունում: Նմանատիպ հարցերը, որոնք այս տարիների ընթացքում նկատելի են դարձել, խմբավորվում են և նախապատրաստվում է ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի փաթեթ, որը կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

Առաջարկում եմ Երևան քաղաքի ավագանու անդամներին, նման խնդիրների հայտնաբերման դեպքում, դրանք ներկայացնել աշխատակազմի իրավաբանական վարչություն:

Տեղեկացնեմ, որ մայրաքաղաքի որոշ վարչական շրջաններում նշված հարցին լուծում տալու նպատակով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ բաժնի աշխատակիցներն են այդ գործառույթն իրականացնում, բայց դա արդյունավետ չէ, քանի որ այդ աշխատակիցներն ունեն ծավալուն աշխատանք, իսկ նրանք ծանրաբեռնվում են լրացուցիչ այլ աշխատանքով:

Ջիվան Պողոսյան

– Պարո՛ն Մարգարյան, տեղեկացնեմ, որ կան բնակիչներ, որոնք չեն վճարել հողի հարկը և առաջացել են պարտքեր, քաղաքացիները չեն կարողանում կատարել սեփականության իրավունքով հողերի պետական գրանցման գործընթացը և պատճառաբանում են, որ շուրջ 20 տարի իրենց իրավունքները ոտնահարվում են:

Տարոն Մարգարյան

– Պարո՛ն Նիկոյան, եթե հողը պետական գրանցում չի ստացել, ինչպե՞ս է հողի հարկ առաջացել:

Ջիվան Պողոսյան

– Բնակիչն ունի հողի սեփականության մասին փաստաթուղթ և առաջացել է նոր վկայականի ձեռք բերման խնդիր:

Տարոն Մարգարյան

– Հասկանալի է, այսինքն՝ քաղաքացին ունի հողի սեփականության մասին որոշում և անհրաժեշտ է կատարել հիմքերի վերականգնման գործընթաց:

Այս խնդիրը մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում առկա է և աշխատանքները փուլ առ փուլ իրականացվում են, յուրաքանչյուր օր ընդունվում է մոտ 20 որոշում՝ հիմքերի վերականգնման մասին:

Ինչ վերաբերվում է պարտաճանաչ և ոչ պարտաճանաչ քաղաքացիներին, նշեմ, որ եթե ոչ պարտաճանաչ քաղաքացին հարկերը չի վճարում, կանգնում է որոշ խնդիրների առջև, իսկ եթե խնդրի

առաջ է կանգնում իր պարտավորությունները պարտաճանաչ կերպով իրականացրած քաղաքացին, ապա այդ հարցը պետք է ուսումնասիրվի:

Ջիվան Պողոսյան

– Անդրադառնամ երկրորդ հարցին.

Հարցը վերաբերում է Հաղթանակ թաղամասում աղբահանության իրականացման գործընթացին:

Հաղթանակ թաղամասում գործող գործարանի աղբավայրի ծուխը տարածվում է թաղամասում, ինչպես նաև թաղամասի հիմնական փողոցով տեղափոխում են վարչական շրջանի աղբը, չնայած որ կա շրջանցիկ ճանապարհ, սակայն այդ ճանապարհից չեն օգտվում:

Տեղեկացնեմ, որ Հաղթանակ թաղամասի գլխավոր փողոցում չկան աղբարկղեր, և փողոցը վեր է ածվել աղբավայրի, խնդրին տեղյակ են նաև աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունում:

Խնդրում եմ նշված փողոցում տեղադրել աղբարկղեր:

Տարոն Մարգարյան

– Հարցին կպատասխանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Կ. Ղազարյանը:

Կառլեն Ղազարյան

– Պարո՛ն քաղաքապետ, տեղեկացնեմ, որ նշված փողոցում տեղադրվել են աղբարկղեր, որոնք գողացել են և այժմ աշխատանքներ են ձեռնարկվում երկրորդ անգամ այդ փողոցում աղբարկղեր տեղադրելու ուղղությամբ:

Ջիվան Պողոսյան

– Սանսեկտորը պատասխանել է, որ աղբարկղերից մեկը գողացել են, որի պատճառով մնացածը իրենք են տեղափոխել:

Ես առաջարկել եմ տրամադրել շինարարական նյութեր, նշված հատվածում պատնեշ կառուցելու համար, քանի որ բնակիչները ոչ թե գողանում են, այլ թափառող կենդանիների պատճառով բնակիչները այդ աղբարկղերը տեղափոխում են:

Տարոն Մարգարյան

– Պարո՛ն Պողոսյան, վարչական շրջանի ղեկավարը և աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետը տեղում կկատարեն ուսումնասիրություններ և հարցին կտրվի վերջնական լուծում:

Ինչ վերաբերում է աղբավայրի կառուցման հարցին, տեղեկացնեմ, որ աղբահանության գործընթացի իրականացման նպատակով հայտարարվել է աղբահանության կազմակերպման միջազգային մրցույթ և մինչև նոյեմբեր ամսվա ավարտը կամփոփվեն մրցույթի արդյունքները:

Տեղեկացնեմ, որ իրականացվել է մրցույթի 3 փուլ, մասնակցում է արտասահմանյան 8 խոշոր կազմակերպություն: 2013 թվականի երկրորդ կիսամյակում մրցույթում հաղթող կազմակերպությանը կներկայացվի պայմանագիրը և աշխատանքներն կիրականացվեն պայմանագրի կետերին համապատասխան:

Նշեմ, որ մրցույթի երկրորդ փուլում քաղաքապետարանի կողմից մասնակից կազմակերպություններին տրվել է առաջադրանք: Այնուհետև մեկ ամիս հետո բոլոր 8 կազմակերպությունները վերադարձել են և վերջին փուլում կազմակերպություններին կներկայացվի գնային առաջարկ՝ Երևան քաղաքի բյուջեին համապատասխան:

2013 թվականի կեսից արդեն հաղթող կազմակերպությունը կսկսի սպասարկում իրականացնել Երևան քաղաքում: Մոտեցումները լինելու են նորովի և ընդգրկելու են ողջ բնագավառը: Կունենանք եվրոպական ամենաժամանակակից չափանիշներին համապատասխան սպասարկում: Արդյունքում լուծում կստանան վերջին տասնամյակներում Երևանի ու երևանցիների առջև ծառացած՝ ոլորտի բոլոր խնդիրները:

Ջիվան Պողոսյան

– Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

– Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Հակոբյանին:

Արմեն Հակոբյան

–Հարգելի՛ քաղաքապետ, մայրաքաղաքում վերգետնյա անցումներ կառուցելիս համապատասխան միջոցներ չեն նախատեսվել հաշմանդամներին և երեխաներին սայլակներով տեղափոխելու համար:

Այսինքն՝ մայրաքաղաքում կառուցված վերգետնյա անցումները չեն ապահովում հասարակության բոլոր անդամների տեղաշարժման հնարավորությունը:

Ի՞նչ եք կարծում:

Տարոն Մարգարյան

–Ներկայումս ներդրումներ կատարող կազմակերպության հետ ընթանում են բանակցություններ՝ 2013 թվականին մայրաքաղաքում 5-7 վերգետնյա անցում կառուցելու հետ կապված և հաշմանդամների հասարակական կազմակերպությունների հետ հանդիպման ժամանակ այդ հարցը բարձրացվել է:

Տեղեկացնեմ, որ նախագծողներին հանձնարարվել է նոր կառուցվող վերգետնյա անցումների նախագծման աշխատանքների ընթացքում հաշվի առնել նման խնդիրները և գտնել համապատասխան լուծումներ:

Նշեմ, որ հաշմադամների հասարակական կազմակերպությունից մեկ անդամ ընդգրկված է քաղաքաշինական խորհրդում և նման հարցերը տեղում կքննարկվեն:

Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը տրվել է հանձնարարական՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հանրային նշանակության կառույցների որևէ շինթույլտվություն այլևս չտրամադրել՝ առանց հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան հարմարությունների ապահովման:

Իրականում այս խնդիրը բոլորի խնդիրն է, ներկայումս Երևան քաղաքում կառուցված ոչ մի վերգետնյա անցում չունի նման հնարավորություն, սակայն նոր նախագծեր իրականացնելիս հաշվի կառնվի:

Արմեն Հակոբյան

– Շնորհակալություն:

Անդրադառնամ երկրոդ հարցին.

Հարցը վերաբերում է «Երևան» բառը առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց անվանման մեջ օգտագործելու հնարավորության մասին:

Այն կազմակերպությունների համար, որոնք արդեն օգտագործում են «Երևան» բառը կազմակերպությունների անվան մեջ, ինչպե՞ս է այդ հարցը հետագայում կարգավորվելու:

Տարոն Մարգարյան

– Եթե տվյալ կազմակերպությանն օրինական թույլտվություն է տրամադրվել «Երևան» բառը կազմակերպության անվան մեջ օգտագործելու համար, ապա դրան չենք անդրադառնա:

Հարցը վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք այժմ ցանկանում են իրենց անվան մեջ օգտագործել «Երևան» բառը:

Ներկայումս չկա նման որոշում, բայց ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվելու դեպքում, եթե քաղաքացին ցանկանում է օգտագործել կազմակերպության անվան մեջ «Երևան» բառը, պարտադիր պետք է մեկ անգամ վճարում կատարի Երևան համայնքի բյուջե:

Արմեն Հակոբյան

– Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

– Շնորհակալություն հարցերի համար, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գրագրեց՝
Ն. Ղուկասյան